

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԱՐԻԱՄ ՀԵՆՐԻԿԻ ՄԿՐՏԶՅԱՆ**

**«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ»  
ԵՐԿԻ ԼԵԶՈՒՆ**

**Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2013**

Ատենախոսության թեման հաստատվել է  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Լ.Շ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Լ.Ս. Խաչատրյան

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ն.Յ. Դիլբարյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2013թ. սեպտեմբերի 18-ին՝  
ժամը 15-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի  
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հունիսի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ն.Մ. ՍԻՍՈՆՅԱՆ

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից հայերենի բառային և քերականական շատ իրողություններ բացահայտելու, հասկանալու համար գնում ենք լեզվի պատմական խորքերը, դեպի հին հայերեն: Գրաբարի, ինչպես նաև լեզվի հետագա փոփոխությունների ուսումնասիրմամբ միայն կարող ենք վեր հանել արդի հայերենին վերաբերող զանազան իրողություններ, առանձնահատկություններ: Այդ պատճառով էլ շատ կարևոր է մինչաշխարհաբարյան ժամանակաշրջանի ուսումնասիրությունը: Կարևոր է ուսումնասիրել ինչպես դասական հայերենը, այնպես էլ հետդասականը, նախամիջինը՝ հասկանալու համար լեզվի պատմական ընթացքը:

Նախկինում մանրակրկիտ ուսումնասիրվել են V դարի երկերը: Միայն վերջերս սկսեցին ուսումնասիրվել միջին դարերի ավելի ուշ շրջանի գործերը՝ բացահայտելու, գտնելու համար գրաբարի հետագա փոփոխություններն ու տեղաշարժերը:

**Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:** Աշխատանքի նպատակն է ներկայացնել «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի լեզվաոճական առանձնահատկությունները:

Առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել, բացահայտել երկի լեզվի՝ դասական հայերենից շեղումները, ոչ օրինաչափ ձևերը.
2. Բնորոշել լեզվի և ոճի յուրահատկությունները.
3. Համեմատել ինչպես V, այնպես էլ VII և X դարերի լեզվավիճակների հետ.
4. Առանձնացնել երկի տարբեր մասերի (քանի որ այն մեկ հեղինակի գործ չէ) առանձնահատկությունները:

**Գիտական նորույթը:** Առաջին անգամ փորձ է արվում հանգամանորեն բնորոշել այս երկի լեզուն, ուսումնասիրվել են հոլովման և խոնարհման համակարգերում առկա բոլոր փոփոխությունները:

Տրվել է համեմատական բնութագիրը՝ բաղդատելով նախ՝ նույն ժամանակաշրջանի այլ երկերի հետ, ապա՝ նախորդ ժամանակաշրջանի լեզվական վիճակի հետ: Հետագոտվել է բառապաշարը, նրա նորակազմ և նոր իմաստներով հանդես եկած շերտերը, որոնց վերաբերյալ նույնիսկ ՆՅԲ-ի նշած տվյալները բավարար չեն եղել:

**Տեսական և գործնական նշանակությունը:** Ուսումնասիրությունը համալրում է ետադասական և նախամիջին շրջանների վերաբերյալ աշխատանքների շարքը: Այն հայոց լեզվի պատմությունն ուսումնասիրողներին կօգնի ամբողջացնելու գրաբարից միջին հայերեն անցումային շրջանի լեզվական առանձնահատկությունները: Ուսումնասիրության արդյունքները կարող են տեղ գտնել հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում, օգտագործվել բուհական հատուկ դասընթացների կազմության ժամանակ, կօգնեն թարգմանություններ կատարելիս, բառարաններ կազմելիս:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է նախաբանից, 5 գլուխներից, եզրակացություններից, աղյուսակներից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկերից, հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 122 էջ է:

**Հետազոտության մեթոդները:** Աշխատանքը հիմնականում կատարվել է նկարագրական – վերլուծական մեթոդով, ինչպես նաև կիրառված են լեզվական փաստերի համադրման համաժամանակյա և տարաժամանակյա եղանակները:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները արտացոլվել են հրատարակված գիտական հոդվածներում:

### **Ատենախոսության համառոտ բովանդակությունը**

**Նախաբան:** «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունը միջնադարի նշանավոր պատմական երկերից է, որը կարևոր տեղեկություններ է պարունակում Հայաստանի արևելյան նահանգների՝ Արցախի և Ուտիքի մասին: Երկի նախաբանում քննվում են աշխատության հեղինակի և ստեղծման ժամանակաշրջանի, կառուցվածքի, աղբյուրների հարցերը, խոսվում է երկի արժեքի, կարևորության մասին, տրվում է ձեռագրերի ընդհանուր բնութագիրը: Ներկայացված են մասնագետների իրարամերժ կարծիքները երկի գրության ժամանակի և հեղինակի վերաբերյալ, տրվում են երկը հիշատակող առաջին մատենագիրների անունները, որի արդյունքում հանգում ենք այն մտքին, որ աշխատությունը խմբագրվել և վերջնական տեսքն է ստացել 10-րդ դարում Մ.Դասխուրանցու կողմից, իսկ դրա մեծ մասը գրվել է 7-րդ դարում և պատկանում է Կաղանկատվացու գրչին: Վերջինիս շփոթելով Մովսես Դասխուրանցու հետ՝ նույնպես անվանել են Մովսես:

Երկը բաղկացած է երեք մասից, այն ընդգրկում է Աղվանքի պատմությունը սկզբից մինչև 10-րդ դարի դեպքերը: I մասը վերաբերում է Աղվանքի պատմությանը՝ սկզբից մինչև մոտավորապես Վարդանանց պատերազմը, II մասը հասնում է մինչև Եզր կաթողիկոսի ժամանակը (640 թ.), III մասը՝ մինչև Սմբատ Ա-ի մահը (915թ.)<sup>1</sup>:

«Աղուանից պատմութիւն»-ը մի ամբողջական ստեղծագործություն չէ. նրանում ներառված են Աղվանքին վերաբերող ամեն ինչ՝ պատմական երկեր, նամակներ, պաշտոնական գրություններ, ժողովրդական գրույցներ, ավանդություններ:

Հեղինակն իր պատմության սկզբնական շրջանի մասին գրելիս օգտվել է 5-րդ դարի պատմիչներից (Ագաթանգեղոս, Փ.Բուզանդ, Եղիշե, Մ. Խորենացի), օգտվել է Սեբեոսից, «Գիրք թղթոց»-ից, «Վարք սրբոց»-ից, Կանոնագրից:

Աշխատությունը ներառում է տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրվածքներ՝

5-րդ դար - Գյուտ եպիսկոպոսի թուղթը,

6-րդ դար - «Վաչագանի վեպ»-ը<sup>2</sup>, Աղվեհի եկեղեցական ժողովի կանոն-

<sup>1</sup> Հր. Աճառեան, Մովսես Կաղանկատուացի. քննութիւն անոր գրութեան ժամանակին վրայ, «*Բազմավեպ*», 1997, էջ 372:

<sup>2</sup> Ա.Հակոբյանը երկի որոշ հատվածների համար պայմանական անվանումներ է դրել. ինչպես՝ «Վաչագանի վեպ», «684թ. պատմություն» («Մատենագիրք հայոց», Անիլիսա, հ.Գ, 2004, հ.Ե.2005):

ները, Մատթե երեցի և Աբրահամ Մամիկոնյանի թղթերը,

7-րդ դար – Կաղանկատվացու «Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց և պէսպէս անցից տիեզերահեծ տազնապին, որ եղև աշխարհաց» վերնագրով գործը, «684թ. պատմութիւն»-ը, Վիրո կաթողիկոսի գրվածքը,

8-րդ դար – Սողոմոն Մաքենացու թուղթը,

10-րդ դար – Մ. Դասխուրանցու գրվածքը:

Պատմիչն իր աշխատությունը սկսել է Խորենացու նման՝ ծագումնաբանությամբ: Սակավաթիվ տեղեկություններ է տալիս Աղվանքի բնության և բարիքների մասին, պատմում է Թադեոս առաքյալի աշակերտ եղիշայի նահատակության և նշխարների հայտնաբերման մասին, ինչպես նաև Ուռնայր արքայի քրիստոնյա դառնալու մասին: Ընդհանրապես երկը լի է սրբերի մասունքների հայտնաբերման մասին պատմություններով, որոնք երբեմն թույլ չեն տալիս ընկալել աշխատության մեջ եղած պատմական ղեպերի հաջորդականությունը:

Երկն արժեքավոր է աղվանական մի շարք ժողովուրդների մասին տեղեկություններով, պատմում է ռուզիկների (ռուսների) Կովկաս անցնելու մասին, կարևոր են Միհրական և Առանշահիկ տոհմերի մասին պատմող դրվագները, այս երկի շնորհիվ է մեզ հասել Դավթակ Քերթողի՝ Ջվանշիր իշխանի ողբերգական մահվան առիթով գրված երկը:

### **Գլուխ I: Գնչունական առանձնահատկություններ և բառապաշար:**

**Գնչունական առանձնահատկություններ:** Այս գլխում խոսվում է երկում առկա սակավաթիվ հնչյունական առանձնահատկությունների մասին: Կարևորվում է կատկային *լ(ղ)* հնչյունի անցումը ետնալեզվային *ղ-ի*, որի առաջին վկայությունը գտնում ենք հենց «Աղուանից պատմութեան» մեջ: Հր. Աճառյանը կարծում է, որ այս երևույթը ձևավորվել է 9-րդ դարում և որպես առաջին վկայություն բերում է Կաղանկատվացուց՝ *Քաղողի* կամ *Քաղղիս* անվանումը<sup>3</sup>: Բերվում են *լ/ղ* հնչյուններով փոփոխակներ. օրինակ՝ *պալատ/պաղատ*, *ղկլաթ/ղկղաթ* (Տիգրիս), *թետալք/թետաղք*:

Երկում *իլիոն* քաղաքի անվանումը հանդիպում է *Ղիոն*, *Լիոն* տարբերակներով: Երկու ղեպում էլ գործ ունենք հնչյունական մեկ այլ երևույթի հետ. միջին հայերենում բառասկզբի ձայնավորը սղվում է<sup>4</sup>:

Նշվում են *աւ>օ* փոփոխությունը փաստող օրինակներ, ինչպես նաև *ո>ու* հնչյունափոխության սակավաթիվ նմուշներ՝ *կաթուղիկոսութիւն* (եջ 270), *Թունաս* (եջ 281, 282):

**Բառապաշար:** Քանի որ Նոր հայկազյան բառարանի հեղինակների ձեռքին չի եղել «Աղուանից պատմութեան» ընտիր և ամբողջական ձեռագիր, ապա երկի քննական բնագիրը հսկայական նյութ է տրամադրում բառապաշարի ուսումնասիրման համար: Առաջին հերթին տրված են ՆԳԲ-ում վկայված այն բառերը, որոնց վերաբերյալ ունենք դիտողություններ կամ հավելումներ<sup>5</sup>: Այդ բառերից են՝ *գիմեզգիմեն, գորղոլաբար, լօռաբոյս, ոսկեսարեան, սարոստանիք*

<sup>3</sup> Հր.Աճառյան, Երբ և դարձավ Ղ, Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1948, 5, էջ 33-40:

<sup>4</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1972, էջ 75:

<sup>5</sup> «Աղուանից պատմութեան» ՆԳԲ-ում վկայված մնացած բառերը տրված են համեմատում:

և այլն: *Ալեծաղիկ, առաքինազգեստ, արտաքսանամ, բերդաքաղաքացի, գոհամատոյց, զրապարհիշտ* (կազմված՝ *զուր* և *պարհիշտ* «պաշտել» արմատներից), *մատնահատ, պաղանաւոր* (*պաղան* «փալան, համետ» արմատից), *լիալիծ* և շատ այլ բառեր գործածվել են միայն «Աղուանից պատմութեան» մեջ:

Խոսվում է նաև երկի այն բառերի մասին, որոնք հիշատակված են Յր.Աճառյանի «Չայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ» գրքում: Անդրադարձ է կատարվել լեզվաբանների մեջ տարակարծությունների առիթ դարձած *ողիբերոն, գողէստան, մոր, նամեսական, տուրկան, փախատ, փարուազ, քաս* և այլ բառերին: Վիճելի են բառերի ձևերը՝ ըստ առանձին ծեռագրերի<sup>6</sup>, ինչպես նաև դրանց նշանակություններն ու ստուգաբանությունները: Ներկայացված է նոր բառերի կազմության վերաբերյալ վիճակագրություն:

Ներկայացված են բառեր, որոնք վկայված են Լ.Յովհաննիսյանի «Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» գրքում: Դրանցից են՝ *այեփարթամ, ակնավայելուչ, առտագուարթ, բաժակագող, գիւղապետ, եկեղեցաւան, թագառիկ, տատասկածին, փայտաշար, քայլարան* և այլն:

Այս ամենին ավելացել են մեր գտած նոր բառերը՝ *ապանկ, գեղուր, գեղիկ, գրած, թշնամադիր, խրոխտածև, յաւէտաբարգաւաճ, շանագօի, շինացի, պատառած, սպահապետ, տեղարան, քաղկեդոնիկ* և այլն:

Թվարկված են նաև այն բառերը, որոնք երկում նոր իմաստով են հանդես եկել՝ *գեռուն* (նախկին «սողուն», «միջատ» իմաստների փոխարեն գործածվել է «կենդանի, անասուն» նշանակությամբ), *ճարտարախօս* («ճարտասան, հռետոր» իմաստի փոխարեն՝ «ճարտարախոսական, պատիր»), *երկրաչափութիւն* (նշանակում է «երկրներ չափելը, շրջելը»), *տրապէզիտ* (բառը նախկինում հանդիպում է «սեղանավոր, լումայափոխ» իմաստով, իսկ այստեղ՝ «սեղանակից, բազմական»), *զուարճատեսիլ* (ունեցել է «զվարճալի» իմաստը, իսկ «Աղուանից պատմութեան» մեջ ստացել է «վառ գույներով, փայլուն» նշանակությունը) և այլն:

II զլխի մյուս բաժինը նվիրված է ածանցմանը և բառաբարդմանը: Ներկայացված է վիճակագրություն նախածանցների և վերջածանցների կիրառության վերաբերյալ: Միայն «Աղուանից պատմութիւն» երկում հանդիպող բառերի մեջ ամենագործածականն է *-ութիւն* ածանցը՝ բազմազգութիւն, գետնակոչութիւն, մատնահատութիւն, պետաւորութիւն, տիրողութիւն, փողորդածգութիւն, ելիստութիւն: Այնուհետև հաճախական է *-ական*-ը՝ զանգիտական, համբակական, հնագրական, պիտառական, մամեսական, ապա՝ *-աբար* ածանցը՝ գոբողաբար, վիպասանաբար, փաթշահաբար:

Սովորական է տեղանունների *-ական* ածանցով գործածությունը՝ *Արցախական, Ուտիական, Կուրական*: Այս երևույթը տարածված էր նաև Կորյունի, Ագաթանգեղոսի, հետագա հեղինակներից՝ Թ.Արծրունու մոտ:

Բազմածանց բառերի կերտման մեջ գործուն են հիմնականում հետևյալ կաղապարները՝

<sup>6</sup> Ձեռագրերի համեմատությունը կատարել ենք ըստ Վ. Առաքելյանի քննական բնագրի:

1. Արմատ + ածանց + ածանց՝  
խորհրդակաճանութիւն, խոհականապէս
2. Նախածանց + արմատ + վերջածանց՝  
համաշխարհական, աներեւոյթ:

**Գլուխ II: Ձևաբանություն:**

**Հոլովման առանձնահատկություններ:** Աշխատանքում մանրամասնորեն ուսումնասիրված են բացառական, գործիական, ներգոյական հոլովների կազմությունը, դրանց զուգածություններն ու հոլովական շեղումները:

Բացառական հոլովի կազմության ժամանակ բառը հաճախ կրկնակի նախդիր է ստանում՝ *ի յահէ, ի յաստուծոյ, ի յայծեաց* և այլն, այդպես է նաև ներգոյականի դեպքում՝ *ի յաջակողմն, ի յերկինս, ի յաշխարհիս* և այլն: Բացառականում հանդես է գալիս նաև հնագույն –*ուստ* մասնիկը՝ *յարքունուստ (151), յաստուածուստ (14, 50)*: Վերջինս (յաստուածուստ), ի տարբերություն նախորդ բառի, 5-րդ դարի հեղինակների գործերում չի հանդիպում:

Մի շարք բառեր, անկախ հոլովումից, գործիականում ստացել են –*ով քինով (ու հոլովում), միզով (ի-ա հոլովում), թագաւորով (ի-ա), Շահեն, Գրիգոր, Սարգիս* անունները:

Առկա են –*ում* վերջավորությամբ ներգոյականի ձևեր:

*խորհուրդ* բառը V դարում ավելի շատ *n* հոլովիչով էր հանդես գալիս, իսկ «Աղռւանից պատմութիւն» երկում՝ –*եան* վերջավորությամբ: Այդպես է նաև –*ուստ, -ուրդ, -ունդ* վերջածանց ունեցող մի շարք բառերում ևս, նույնիսկ կան անձնանուններ –*եան* վերջավորությամբ՝ «*Պաւղոսեան* հաւանեալ ձայնի» (Պողոսի խոսքի համաձայն (32)):

*Գուրք* բառը ներգոյականում հանդիպում է *ի գրի, ի գուրք* ձևերով:

Ձուգահեռ ձևերով են հոլովվել հետևյալ բառերը՝

մահ (մահու // մահուան)

հաւ (հաւու // հաւոյ)

վանք (վանաց // վանից)

առաւօտ (առաւօտում // առաւօտին)

երեց (երիցու // երիցոյ)

հաց (հացոյ // հացիւ)

էշ (իշոյ // իշու):

*Ո* հոլովման պատկանող *խորհուրդ, ժողովուրդ, ծառ, դեղ* բառերը հոգնակի գործիականում –*ովք* վերջավորության փոխարեն ստացել են –*օք*:

*Ի* վերջնահնչյուն ունեցող մի շարք բառերում հոլովական վերջավորությունից առաջ այն ընկնում է՝ *պատասխանոյ (ՄՅ, հ. Դ, 401)<sup>7</sup>, մատանոյ (ՄՅ, հ. Ե, 842)* , *երանելոյ (ՄՅ, հ. Գ, 60)* , *հոզով (ՄՅ, հ. Ա, 1089), առաքինաց (ՄՅ, հ. Ա, 1084)*:

*Ի*-ով վերջացող որոշ բառերի դեպքում էլ նկատվում են շեղումներ օրինաչափ ձևերից՝ *փոշով (ՄՅ, հ. Ա, 1085), որդեաց (ՄՅ, հ. Գ, 58), մատանով (ՄՅ, հ. Գ, 84)*:

<sup>7</sup> «Աղռւանից պատմութեան» քննական բնագրերը կազմել են Վ. Առաքելյանը, Ա. Հակոբյանը: Վերջինիս կազմածը զետեղված է «Մատենագիրք հայոց» -ում, որից մեջբերումները նշում ենք ՄՅ համառոտագրությամբ:

Հատուկ ուշադրություն է դարձված հատուկ անունների գործածությանը և հղովմանը: *Թեոփիլոս* անձնանունը սեռականում հանդիպում է երեք ձևով՝ *Թեոփիլոսի*, *Թեոփիլեայ* և *Թեոփիլեան*: *Չերովդէս*-ը բացառականում ունի *ի Չերովդէտ* ձևը: Ջուզահեռ ձևերով են հանդիպում *Չոփիսիմէ* (*ա//ի*), *Գայանէ* (*ա//ի*), *Ջաքարիա* (*ա//ի*), *Յովհաննէս* (*ու//ի*), *Աշոտ* (*ի//ո*) անունները:

*Ալեքսանդրիա* տեղանունը հղովված է *Աղեքսանդրու* (343) ձևով:

Հաջորդ բաժինն ածականի և թվականի վերաբերյալ է:

Երկում *-գոյն* ածանցով են կազմվել ինչպես բաղդատական աստիճանը, այնպես էլ գերադրականը՝ *մանկագոյն ի նոցանէ*: Գերադրականը հանդիպում է նաև *-գոյն+յոյժ* կամ *յոյժ+ -գոյն* կաղապարով՝ *ահաւորագոյն յոյժ, յոյժ ջերմագոյն*:

Երկում նկատվում է թվականների գործածության և գրության բազմազանություն՝ ԿԵ, ԲԾԵ, ԳՈ, ԿԲ հազար և այլն:

*Մի* թվականը հանդես է գալիս և՛ նախադաս, և՛ ետադաս, այն հանդիպում է նաև *միմ* ձևով (91):

Գտնում ենք թվականի հնագույն *-ր* մասնիկով ձև՝ *յերիր աւուր* (38):

Հետաքրքիր է, որ երբեմն բացարձակ թվականը գործածված է դասականի փոխարեն՝ «Ի սորա *հինգ* ամին յկրաբիա կռին եղև» (317):

**Դերանունների գործածությունը:** Ստացական դերանունները գերազանցապես գործածվել են ետադաս: Սակավաթիվ են այդ դերանունների նախադաս գործածությունները:

«Աղուանից պատմութեան» մեջ *քո* դերանվան բացառականը գործածվել է *ի քունմէ* ձևով (111, 171), որը *յիսմէ* ձևի սնանակությամբ է:

Գոյական անվան հետ հոգնակի գործիականում ստացական դերանունները դրվում են նաև եզակի թվով՝ *իւրով եղբարք* (121), *իւրով զօրօք* (101):

Կան դեպքեր, երբ ցուցական դերանունները նախադասում գործածվել են երկրորդ ձևով՝ «Եւ *յայնմիկ զօրքն* Հայոց կատարելով զգործ մեծի պատերազմին...» (115):

Հանդիպում է հակառակ երևույթը. ետադասում պատմիչը կիրառել է ցուցականների առաջին ձևերը՝ *ի տեղւոջդ յայդմ* (75), *ազգքս այս* (7):

Երկում *նա* դերանվան բացառականը հաճախ կիրառվել է *ն* հոդով՝ *ի նմանէն* (72, 185), *ի նոցանէն* (42, 54):

**Բայ. խոնարհման առանձնահատկություններ:** Նախ անդրադարձ է կատարվել դերբայներին: Երկում հանդիպում են անորոշի *-իլ* վերջավորությամբ ութ կիրառություն՝ *խնամաւորիլ*, *անիծանիլ*, *բերկրիլ*, *սատակիլ*, *գտանիլ*, *թափիլ*, *դասիլ*: Իլ վերջավորություն ստացածների մի մասը նույնիսկ *ի* խոնարհման չեն պատկանում՝ *անիծանիլ*, *թափիլ*: Դրանց մի մասն էլ կրավորականի իմաստ է արտահայտում: Սա մեզ թույլ է տալիս մտածելու, որ կրավորականի արտահայտման սաղմերը առկա են նաև «Աղուանից պատմութեան» մեջ:

Անորոշ դերբայը գործածվել է դիմավոր բայի արժեքով՝ «Որպէս *խրատել* զսիրելի որդի և *անտես առնել* զօտարացեալ խորթն» (33):

Անորոշ դերբայը *մի* մասնիկի հետ արգելական հրամայական է կազմել՝ «Վասն որոյ ասեմ քեզ *մի կրկնել* առ իս վասն դորին ունայն խնդրոյ ...» (134): «*Մի՛ դասիլ* ի հակառակող կամս...» (277): Այսպիսի գործածություն կա նաև 5-



րդ դարի գործերում («Աստվածաշունչ», Փ.Բուզանդ): Ա.Աբրահամյանը կարծում է, որ հենց սա է արգելականի սկզբնական ձևը<sup>8</sup>:

Ինչպես գիտենք, *ե, ի* խոնարհումների ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, սակայն երկուսն էրբեմն անցյալ կատարյալի հիմքից է կազմվել՝ *այրեցող, խորհեցող, իշխեցող*:

*Մրմռալ* բայը երկուսն հանդիպում է *մրմռեմ* ձևով: Սա է պատճառը, որ բայի ենթակայականը հանդես է գալիս *մրմռող* (101) ձևով:

Բազմաթիվ են դիմավոր բայի արժեքով գործածված անցյալ դերբայները:

Ատենախոսության մեջ նշված են նաև այն բայերը, որոնք խոնարհման կանոններից շեղվել են. օրինակ՝ *ընկուզանեմ* բառը՝ որպես *ե* խոնարհման ածանցավոր բայ, անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում պետք է հանդես գար արմատական հիմքով, սակայն երկուսն երկրորդ ապառնին կազմվել է ցոյական հիմքով՝ *ընկուզեսցին*: «Ջանգիտ կորստեան փորեցին խորխորատ, զի զհովին բարի *ընկուզեսցին* ի նա» (էջ 226): (= Անդառնալի կորստեան անդունդ փորեցին, որպեսզի բարի հովվին խորասուզեն նրա մեջ):

Սոչ օրինաչափ ձևերով են խոնարհվել հետևյալ բայերը՝

*յաւելուլ* (ու խոնարհում) – *յաւելոր* (187)

*հաստատեմ* (ե խոնարհում) – *հաստատիմք* (252)

ունիմ- կալցեն (310):

Որոշ բայեր անցյալ կատարյալի հոգնակի երկրորդ դեմքի դեպքում *-էք* վերջավորության փոխարեն ստացել են *-իք՝ պաշտեցիք* (251), *հասիք* (299): Դասական հայերենում *-իք* էին ստանում որոշ անկանոն բայեր, սակայն հետագայում կատարյալի և հրամայականի տարբերակման նպատակով հետազիտե կարևորվեց նրա կիրառությունը:

Երկուսն կա անցյալ անկատարի *-իր* վերջավորությամբ 23 դեպք՝ *կոչիր, եղանիր, շաղախիր, սատակիր* և այլն:

«Ադուանից պատմութեան» մեջ երկրորդ ապառնին ավելի շատ է գործածվել, քան առաջին ապառնին: Առաջին ապառնի ունեցող նախադասությունները հիմնականում պայմանի պարագա երկրորդական նախադասություններ են. օրինակ՝ «Եթե աշխարհական ոք ի վերայ երիցու բամբասանս *դնիցէ*, եպիսկոպոսն դնիցէ ի վերայ նոցա կարգ և յանապատի ապաշխարեսցեն» (92):

Խոսվում է *անցյալ դերբայ + լինել բայի անկատար անցյալ* կաղապարով ժամանակաձևի մասին: Քանի որ անկատար անցյալը ներգործական և կրավորական սեռերի համար չունի տարբերակիչ վերջավորություններ, այդ պատճառով հիշյալ կաղապարով արտահայտվում է գերազանցապես կրավորականի իմաստ՝

*խողխողեալ լինէիմ* = խողխողվում էին

*լինէիմ շնորհեալ* = շնորհվում էին:

**Ժամանակների իմաստային կիրառությունը:** «Ադուանից պատմութիւն» երկում հաճախ այս կամ այն ժամանակաձևը տարբեր ժամանակների իմաստով է գործածվում: Սահմանական ներկան կիրառվել է ապառնու իմաստով, նաև՝

<sup>8</sup> Ա.Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 58:

անցյալ կատարյալի իմաստով. օրինակ՝ «*Գնայ անցանէ* ընդ Ասորեստան երկիր» (337):


Անցյալ անկատարը, բացի իր բուն իմաստից, գործածվել է ներկայի և անցյալ կատարյալի փոխարեն: Այդպիսի օրինակները երկուսն բազմաթիվ են: «Եւ *ղնէր* ի հանգստարանի՝ ի տեղւոջն, յորում պսակեցան սուրբքն» (=Թաղում է նույն տեղում, որտեղ նահատակվեցին սրբերը (էջ 34)): «...Որով խոցոտեալ *սատակէր* զաներևոյթ թշնամին» (=Որով խոցոտելով սպանեց աներևոյթ թշնամուն (էջ 32)):

Անցյալ կատարյալը հազվադեպ հանդես է գալիս վաղակատար անցյալի իմաստով. «...Ըստ հայրենական աւանդին, զոր Ուռնայր *հաստատեաց*» (= Ըստ հայրենական ավանդույթի, որ Ուռնայրն էր հաստատել (էջ 15)):

Հետևյալ օրինակում անցյալ կատարյալը գործածվել է ապառնու իմաստով՝ «Ջանա՛ ապրել ի ձեռաց դոցա... այլ ես *կորեայ* և *անգաւակացայ*» (170):

Վաղակատար ներկան երբեմն հանդիպում է որպես ներկա, իսկ երկրորդ ապառնին երկուսն արտահայտել է նաև հրամայականի իմաստ՝ *յուշ լիցի* = հիշեցեք (66), *մի՛ ընտրեսցես* = մի՛ ընտրիր (168):

Ժամանակների իմաստային կիրառությունը հստակորեն երևում է գծապատկերում: Սլաքներով նշված են ժամանակաձևերի այս կամ այն իմաստով գործածվելը:



**Հարադիր բայեր:** Հարադիր բայերը խմբավորված են ըստ կաղապարների: Ձետեղված են հարադիր բայեր, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում. դրանք բերված են ԼՀովհաննիսյանի բառարանից<sup>9</sup>: Դրանցից են՝ ածել ի զարմացումն, բազմադաշն լինել, բակարգել առնել, գրթախաղաց լինել, խոստ կացուցանել, հիածածուկ առնել, մահ ի վերայ դնել, տարաբնակ առնել և այլն:

Երկուսն կան հարադիր բայեր, որոնք զետեղված չեն ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ հիշյալ բառարանում. օրինակ՝ առնել քննութիւն, բազմամեծար առնել, ածել ի

<sup>9</sup> Լ.Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

հնազանդութիւն, վերանալ ի կենցաղոյս, ելանել ի կենցաղոյս, մազապործ գերծանել և այլն:

Խոսվում է հարադիր բայերի բաղադրիչների շարադասութեան վերաբերյալ: Առանձնացվել են այն հարադիր բայերը, որտեղ բայը դրվում է և՛ ետադաս, և՛ նախադաս՝ լինել ժողով/ժողով լինել, յանձն առնել//առնել յանձն, երկիր պազանել//պազանել երկիր և այլն:

Ինչպես հայտնի է, պատճառականի իմաստն արտահայտվում է նաև նկարագրական եղանակով՝ *տալ* բայի հարադրութեամբ. օրինակ՝ *տալ տանել, տալ բերել*, սակայն այդ դերով հանդես է եկել նաև *առնել* բայը՝ *տեղեակա առնել, յուշ առնել*:

Երկուն հաճախադեպ են գուգադրական բայերը. դրանց մեջ մեծ թիվ են կազմում երկբաղադրիչ գուգադրականները, իսկ ամենից շատ գործածվել է *գալ հասանել* բայը:

**Նախդիրներ, նախադրութիւններ:** Երկուն ամենից շատ գործածվել են *զ* և *ի* նախդիրները: Խոսվում է նախդիրների ոչ օրինաչափ կիրառութիւնների վերաբերյալ. օրինակ՝ բացառական հոլովը երկուն արտահայտված է նաև *զ* նախդիրի միջոցով՝ «Ուրախութեամբ գոհանայր *զտեսանել*» (203):

Կաղանկատվացին գործածել է ի + տրական = գործիական իմաստով ձևեր:

Դասական գրաբարում «մասին» իմաստն արտահայտվել է *զ* + բացառական հոլովով, իսկ «Աղուանից պատմութեան» մեջ՝ նաև *զ* + հայցական կաղապարով. օրինակ՝ «Եւ այժմ գեղեալ առ մեզ *զսքանչելիս* յեկելոցդ լուեալ ձեր» (էջ 263): (=Եվ այժմ մեզանուն կատարված հրաշքների մասին դուք լսել եք ձեզ մոտ եկածներից):

*Չ* նախդիրը հայցականի հետ երկուն հազվադեպ ցույց է տալիս միասնութեան գաղափար, որը սովորաբար արտահայտվում է ընդ + հայցական կաղապարով՝ «Միաբանեալ *զհիւսիսայինսն* դիմէ ի վերայ Շապիոյ արքային» (29):

*Առ* նախդիրը տրականի հետ արտահայտել է ներգոյականի իմաստ՝ «Անդ եղեալ *առ եկեղեցոյն* հուպ ի բեմն ի հիւսիսոյ կողմանէ» (39):

Դասական գրաբարում ըստ + հայցական կաղապարով արտահայտվում են «դուրս», «այն կողմ» իմաստները, սակայն Կաղանկատվացին այդ իմաստն արտահայտել է ըստ+բացառական հոլովով, այսինքն՝ նմանվում է աշխարհաբարին՝ «Եւ կացուցեալ զնոսա... *ըստ Վեհ Արտաշիր քաղաքէ*» (146):

Կարող ենք եզրակացնել, որ երկուն գոյութիւն ունեն նախդիրների գործածութեան որոշ շեղումներ:

Ուշադրութիւն ենք դարձրել նախադրութիւնների կիրառութեանը, ինչպես նաև դրանց շարադասութեանը: *Յանդերծ* նախադրութիւնը ավելի շատ ցանդիպում է ետադաս: Երբեմն *ի վերայ* նախադրութիւնը ևս ետադասութիւն է ցուցաբերել: Այն արտահայտել է ոչ միայն «վրա» իմաստը, այլև «վերաբերյալ». օրինակ՝ «Եւ թերև *ի վերայ* սորա մարգարեանայր երջանիկն Եսայիաս, գտեսիլն, զոր ետես *ի վերայ* Բաբելոնի» (43):

**Գլուխ III: Շարահյուսութիւն:** Այս գլխի սկզբում անդրադարձել ենք ենթակայի արտահայտութեանը: «Աղուանից պատմութեան» մեջ բազմաթիվ են այն նախադասութիւնները, որտեղ ենթական դրված է սեռական հոլովով, իսկ ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով՝ «Եւ շարժեալ *բազմութեանն* զկնի մորայ» (11): Այդպես է նաև անցյալ դերբայով բաղադրյալ ժամանակի

դեպքում՝ «Որպես լուեալ էր *Վաչէր*» (51): երկուն հանդիպում է նույնիսկ դիմավոր բայի հետ դրված սեռականով ենթակա՝ «*Նորա* ի բռնութենն տանջանացն *ապաստանի* ի սուրբ քաղաք Երուսաղէմ» (77):

Հանդիպում են տրական հոլովով ենթականեր ևս. դրանք դրված են միադիմի բայի և անորոշ դերբայի մոտ, նաև այն դեպքում, երբ ստորոգյալն արտահայտված է *լինել*, *եղանել*, ինչպես նաև այլ բայերով:

Երկուն հանդիպում է հայցական հոլովով ենթակա՝ «Իսկ հայրապետն Աբրահամ ասէր լինել յառաջահաւատ քան զՎիրս, *զԱղղուանս* և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւնն» (274): Ինչպես հայտնի է, հայցականով ենթական համարվում է հունաբանություն:

Ենթակայի դերով հազվադեպ հանդես է գալիս հոդը՝ «Ունկնդիր լերուք մտադիւրութեանք բանիս, զոր լսէք» (Մատենագիրք հայոց, հ. Դ, 845):

«Աղուանից պատմութեան» մեջ գտնում ենք օրինակներ, որոնցում ենթական և ստորոգյալը թվով չեն համաձայնել, և երկու դեպքում էլ ենթական *նշխարքն* է՝ «Երանելոյն *նշխարքն* յարևելս կոյս *մնայր*» (80), «*Մնաց* միայն ի տեղւոջն առաքելականն այն *նշխարք*» (11): Երկու նախադասությունների դեպքում ճիշտ կլիներ հոգնակին, այդ դեպքում ինչու՞ են եզակի թվով դրված: *Նշխարք* բառը առնված է որպես եզակի թվով բառ, քանի որ ուշ շրջանում շատ բառերում *ք*-ն այլևս չէր գիտակցվում որպես հոգնակիության ցուցիչ (ժամանակակից հայերենի գիրք, վերք, դիրք, մասունք, բարձունք և այլ բառեր գրաբարում հոգնակի են եղել): Շատ բարբառներում *նշխար* բառը հանդես է գալիս *նշխարք* ձևով: Սկզբնաղբյուրում, սակայն, հոգնակի թվի իմաստի փոխարեն չէր կարող եզակի թվով բայ դրված լինել. ըստ մեր կարծիքի՝ սա հետապոյուն սկզբնաղբյուրից օգտվողի, կամ առավել հավանական է՝ արտագրողի «ուղղումներ» են: Այդ արտագրողը *նշխարք*-ը դիտել է եզակի և ստորոգյալները ևս դարձրել է եզակի՝ առանց խորանալու նախադասությունների իմաստի մեջ:

Աշխատության մեջ կան ստորոգյալի զեղչման դեպքեր՝ «*Եւ ապա դեսպակ աշխարհատիկնոցն և տիկնունի գունդն զհետ նորա*» (62): Այստեղ զեղչված է *զնալ* բայը:

Երկուն բազմաթիվ են շարադասության շեղումները: Շատ դեպքերում բացառականով բառը հեռացած է *ի* նախդրից, այդպես է նաև ներգոյականի դեպքում՝ *ի* դիւացն զանազան և պղծալից *պաշտմունս*: Այս երևույթը նկատվում է որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի դեպքում ևս: Հարադիր բայերի բաղադրիչների իրարից հեռացած լինելը երկուն սովորական երևույթ է:

**Գլուխ IV: Ոճական առանձնահատկություններ:** «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկուն բազմաթիվ են հոմանիշները: Դրանք տարբերվում են ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, գործածության հաճախականությամբ: Շատ են «մահանալ» իմաստն արտահայտող բառերը, հարադրությունները, դարձվածքները՝ մեռանել, վախճանել, սպառել, սատակել, մահու մեռանել, յաւելուլ առ հարս, փոխադրել ի Քրիստոս, ելանել ի կենցաղոյս և այլն: Երբեմն հոմանիշները դրվել են կողք կողքի, մինևույն նախադասության մեջ՝ «Ի ձեռն սիրոյ **մօտիմ**, և յուսով **մերձեմամ**» (18) և այլն:

Նույն ձևով են գործածվել նաև հակամիջները: Երկում բազմաթիվ են համեմատությունները, որոնք խոսքն ավելի դիպուկ ու գեղեցիկ են դարձնում: Պատկերավորման միջոցներից հաճախադեպ են նաև կրկնությունները:

«Աղուանից պատմութեան» մեջ առկա է «խոնարհված բայ + նույն բայի գործիականով անորոշ դերբայ» կաղապարը՝ *նզովելով նզովեսցեն, պղծելով պղծեսցի*: Այս երևույթը հատուկ է հայերենի բոլոր փուլերին և սաստկական իմաստ է արտահայտում: Անորոշ դերբայի հայցականը ևս նույն դերով է հանդես գալիս. օրինակ՝ *զփայլատակելն փայլատակեն* (Մատենագիրք հայոց, հ. Ե, 877): Այսպիսի արտահայտությունները հատուկ են նաև ժամանակակից խոսակցական լեզվին, ինչպես՝ «Սենակ տեսնեիր, ի՞նչ ուտել կերան»:

Երկում տարածված ոճական միջոցներից մեկն էլ վերացական բառի հանդես գալն է թանձրացականի իմաստով, ինչպես նաև սեռականով ավելադրությունը:

Երկում մարդկանց անվանակոչումը կատարվում է տարբեր արտահայտություններով՝ Թադեոս անուն, որում անուն էր Պերոզ, որում Իսրայել կոչիւր, Դավթակ անուն կոչեցեալ, Աւառանշան անուն ճանաչէր: Կա օրինակ, որտեղ *որ* դերանվան տրականով գործածության փոխարեն առկա է սեռականով ձև՝ *որոյ անուն էր Վարազ Տրդատ*:

Ընդգրկուն են *երես* բառի գործածության սահմանները, այն ունի բազմաթիվ նշանակություններ՝ դրվում է անձի փոխարեն, նշանակում է «դիմաց», «դեմ, ընդդեմ», բացառական հոլովի իմաստ, «մակերես», «անունից, ինչ-որ մեկի անունից», «պատճառով, երեսից», կազմել է դարձվածքներ:

Երկում երբեմն ստորոգյալի հետ գործածվել է *եղև* բառը՝ «Եւ եղև ի ժամանակին յայնմիկ խաղալ զմալ» (ՄԶ, հ. Ե, 855): Սա համարվում է եբրայաբանություն, և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը լի է այդպիսի դեպքերով:

**Գլուխ V: Լեզվաոճական առանձնահատկությունները՝ ըստ առանձին հատվածների:** Ինչպես արդեն նշվել է, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը խմբագրվել է 10-րդ դարում Մ.Դասխուրանցու կողմից, իսկ ծավալուն մասերից մեկի հեղինակը 7-րդ դարում ապրած Կաղանկատվացին է: Երկուսին պատկանող մասերում էլ առկա են ինչպես իրենց գրած, այնպես էլ այլ նյութերից բերված հատվածներ: Այս գլխում տարբերակված են երկի հատվածները՝ ըստ ժամանակաշրջանի և ըստ հեղինակների:

Վաչեին ուղղված Գյուտ եպիսկոպոսի (V դար) թուղթը գեղարվեստական բարձր ոճով գրված ստեղծագործություն է: Այն լի է զանազան ոճական հնարքներով ու պատկերավորման միջոցներով՝ վերացականը թանձրացականի փոխարեն, կրկնություններ, համեմատություններ, հակադրություններ, հոմանիշներ, հակամիջներ: Գյուտ եպիսկոպոսը գործածել է բառեր, որոնք տեղ չեն գտել ՆՅԲ-ում՝ *հարաւարմակ, չղջանման, երաշտուտ, ժանգահոժ*:

VI դարի գրվածք է Վաչագան արքայի կյանքի և գործունեության մասին պատմող մասը, որը Ա.Յակոբյանն անվանել է «Կեանք և վարք Վաչագանայ արքայի» կամ «Վաչագանի վեպ»:

Երկի հեղինակը Աղվեմի եկեղեցական ժողովի կանոնները (VI դար) «Կանոնագիրք հայոց»-ից ամբողջությամբ արտագրել է: Պարունակում է 21

կանոն, ինչպես նաև առաջաբան և վերջաբան, որոնցում թվարկված են եկեղեցական ժողովի մասնակիցների անունները:

I գրքի ԻԴ գլուխը Սատթե երեցի պատասխանն է Վաչագան արքային:

«Աղուանից պատմութեան» մեջ ներառված է Վիրո կաթողիկոսի (VII դար) երկը՝ «Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն և գերութեանն ի մասին»:

Կաղանկատվացու «Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց և պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղև աշխարհաց» վերնագրով գործը ստեղծվել է VII դարում: Հետագայում Դասխուրանցին Կաղանկատվացու երկը բաժանել է մասերի և յուրաքանչյուրին առանձին վերնագիր դրել: Դրանում կարելի է համոզվել՝ ուշադրություն դարձնելով II գրքի Թ գլխին: Դասխուրանցու միջամտության արդյունքում վերնագիրը մնացել է վերոհիշյալ գլխին, որի բովանդակությունը չի համապատասխանում վերնագրին:

VII դարի գրվածքներից է Ա. Հակոբյանի կողմից «684թ. պատմություն» վերնագիրը ստացած երկը: Այն ընդգրկում է I գրքի ԻԷ, II գրքի ԺԸ-ԼԱ, ԼԳ -ԼԴ, ԼԶ-ԽԵ գլուխները:

VIII դարի գրվածք է Սողոմոն Սաքենացու թուղթը՝ եկեղեցու ինը դասերին վերաբերող:

X դարում է ապրել երկի խմբագիր Մ. Դասխուրանցին, որի գրվածքները ընդգրկում են «Աղուանից պատմութեան» III գրքի մեծ մասը, I գրքի Ա-Թ, ԺԲ-ԺԳ և II գրքի Գ-Ե, Ը, ԺԷ, ԽԵ գլուխները: Երկի այս հատվածները զիջում են նախորդ ժամանակաշրջանի գրվածքներին ոճի և բառապաշարի առումով:

Վերոհիշյալ հատվածները, բնականաբար, ունեն իրենց լեզվաոճական տարբերությունները:

Դասխուրանցու հատվածում «խոստովանել» իմաստով գտնում ենք *խոստովան լինել* հարադրությունը, իսկ «Վաչագանի վեպ»-ում երկու անգամ գործածվել է *խոստուկ լինել* բայը: Նույն հատվածում *հաց* բառը հոլովված է *ի* հոլովմամբ, իսկ Աղվենի ժողովի հատվածում՝ *հացոյ*, համապատասխանաբար՝ *Դարահոջու* («Վաչագանի վեպ»), *Դարահոճոյ* (Աղվենի ժողով): «Սահանալ» իմաստով *ելանել ի կենցաղոյս, վերանալ ի կենցաղոյս* արտահայտությունները հատուկ են «Վաչագանի վեպ»-ին: Այս գրվածքին է բնորոշ նաև *ի վերայ* նախադրության գործածությունը «վերաբերյալ» իմաստով: Ի տարբերություն մյուս հատվածների՝ Աղվենի ժողովի մասում «գյուղ» իմաստով բազմիցս գործածված է *չէն* բառը, հարադրությունները գլխավորապես կազմված են *դնել* բայի միջոցով՝ *կոծ դնել, պատուհաս դնել, մահ ի վերայ դնել, մեղս ի վերայ դնել* և այլն: Դավթակ Քերթովի երկը համեմատելով՝ տեսնում ենք, որ այն բավականաչափ տարբերվում է հենց VII դարի մյուս հատվածներից, քանի որ մյուս հեղինակները, լինելով հոգևորական, ավելի հարագատ են մնացել դասական հայերենին: Դավթակի «Ողբ»-ում հանդիպում է ներգոյականի կազմության ոչ օրինաչափ ձև՝ *յանապատ*: Այսպիսի գործածություն «Աղուանից պատմութեան» մեջ համարյա չկա, նույն բառը Աղվենի ժողովի հատվածում հանդիպում է *յանապատի* ձևով: «Իբրև» իմաստով Դավթակը գործածել է գերթ (առաջացել է զիարդ բառից), որը հատուկ չէ գրաբարին: Այս ժողովրդական խոսակցական ձևերի կիրառումը կարծես արդարացված է նրա գրվածքում, քանզի բանաստեղծը արտահայտում է սիրելի իշխանի մահվան առիթով ժողովրդի վիշտն ու ցասումը՝ համենված գովեստի ու փառաբանության

խոսքերով ու չարանենգ մարդասպանին ուղղված անեծքներով: ԴԱՆԱԿԱՏԱԿԱՆԻ հատվածին հատուկ են հնչյունական առանձնահատկություններ՝ *Տորոս, Թունաս*։ Նրա երկուն ենք գտնում տարբեր հոլովումների պատկանող անունները՝ գործիականի ընդհանուր ձևով՝ *Գրիգորով, Սարգսով, Քրիստոսատրով*: Հատվածն ընթերցելիս այն տպավորությունն է ստեղծվում, որ գործ ունենք ոչ թե յոթերորդարյա բնագրի, այլ ավելի ուշ ստեղծված գործի հետ:

Կաղանկատվացին գործածել է *սպառազինուք*, իսկ «Վաչագանի վեպ»-ում առկա է *սպառազինօք, Ատրպատական* բառը Կաղանկատվացու հատվածում ու հոլովման է, Դասխուրանցին գրել է *Ատրպատականայ*:

Տեղանունը *-ական* ածանցով գործածելը հատուկ է «684թ. պատմութեանը» (9 անգամ), իսկ մեկական անգամ կիրառված է Դասխուրանցու հատվածում և «Պատմութիւն յաղագս յարուցման ...» երկում: Կաղանկատվացին գործածել է «մաշեաց ի սուր սուսերի» արտահայտությունը (ՄԳ, հ. Դ, 382), իսկ Դասխուրանցին՝ *ի սուր սուսերի արկանել* (էջ 119, 318, 326), *ի սուր սուսերի մատնել* (էջ 338):

«684թ. պատմութեանն» են հատուկ հետևյալ իմաստն ունեցող նախադասությունները. «Եւ մեք թեպէտ հեռի ենք մարմնով, մերձ համարեալ հոգով յիշեսցիք առաջի նորագիտ խաչիդ» (էջ 211): «Եւ արդ մեք և աշխարհս մեր, թեպէտ և մարմնով հեռի ենք, սրտի սիրով համարինք թէ յանդիման տեսաք զձեզ» (էջ 265): «Խոսք բացել» իմաստը «Վաչագանի վեպ»-ում արտահայտված է «ոչինչ ի վեր հաներ զբանսն» (էջ 58), Դասխուրանցու մասում՝ «բերաւ բան ի բերան» (էջ 273): Կաղանկատվացու ոճին է հատուկ խոսքը չերկարացնելու կամ մի փոքր համբերելու մասին արտահայտությունները. նա կարծես ջանում է չձանձրացնել ընթերցողին «զի ոչ երկարեցից զբանս» (էջ 129), «բայց անսացէք ինձ սակաւիկ մի» (էջ 146): Դասխուրանցուն հատուկ է հետ և առաջ ընկնելը. նա մեկ հիշատակում է դեպք, որի մասին արդեն գրված է, մեկ էլ զգուշացնում է, որ հիշատակվելու է հետո՝ «որ վերագոյնդ կան ի գրի» (էջ 126), «զոր վերագոյն գրեցաք ի մատենիս» (էջ 172):

Լեզվաոճական առանձնահատկությունների տեսակետից կարևոր ենք համարում այն, թե ինչպես է հեղինակը ողջունում, ինչպես է սկսում շարադրանքը. «684թ. պատմութեան» մեջ գերակշռող է «ի տեր խնդալ» արտահայտությունը, իսկ Գիւտ եպիսկոպոսը մի տեղ ունի «ի տեր բերկրիլ», Եղիայի նամակում առկա է «այսինչ մարդուց այնինչ մարդուն» կաղապարը:

Անդրադառնամք մի փոքրիկ պատմության, որը ուշադրության չի արժանացել ո՛չ այս աշխատանքի նախորդ գլուխներում, ո՛չ էլ շատ հետազոտողների կողմից: Դա Հովհաննես Մկրտչի գլխի մասին պատմությունն է, որը «Աղուանից պատմութեան» տասնյակ ձեռագրերից միայն *с* և *г* ձեռագրերում է զետեղված, իսկ Վ.Առաքելյանի քննական բնագրում ներկայանում է որպես Յաւելուած Ա: Այս պատմությունը գրված է պարզ և աղքատիկ գրաբարով, ակնհայտ է, որ ուշ շրջանի է պատկանում: Լեզվաոճական տեսակետից տարբերվում է «Աղուանից պատմութեան» բոլոր մասերից: Սովորական է հայցականով ենթական, «մեջ, ներսը» իմաստն արտահայտված է ոչ թե ներգոյականով, այլ *ի մէջ* նախադրությամբ, հանդես է գալիս խոսակցական լեզվին բնորոշ *պաղ* բառը: *Սուսեր* բառը (ի-ա հոլովում)

գործիականուն ստացել է *բ՝ սուսերբ* (էջ 348): Ունի *ի մէջ սկտեղին* կապակցությունը: Ինչպես գիտենք, *սկուտեղ* բառի սեռականը լինում է *սկտեղ*, այստեղ ավելացել է նաև *ի* հոլովիչը: *Արցախ* բառը ամբողջ երկուն *ա* հոլովիչ է ստացել, իսկ այս հատվածում կա *Արցախու* ձևը (էջ 349): Անցյալ դերբայի մոտ ենթական ուղիղ ձևով է դրվել՝ «Մինչև *երևեալ* սուրբն *Յովհաննէս*» (էջ 349): Նկատելի է, որ դասական հայերենի համեմատությամբ այսքան շեղումները մի փոքր հատվածի համար շատ են:

Կարևոր է անդրադառնալ նաև վերնագրին՝ «Վասն պատուական գլխոյն Յովհաննու Սկրտչին, թե որպէս բերաւ ի գաւառն Արցախ և եղաւ ի սուրբ Գանձասար, որ է աթոռ Աղուանից»: Վերջին արտահայտությունը մեզ հուշում է, որ հատվածը գրվել է այն ժամանակ, երբ Գանձասարը եղել է կաթողիկոսական աթոռանիստ: Դա տեղի է ունեցել մոտ 1400 թվականին<sup>10</sup>: Սա թույլ է տալիս մեզ եզրակացնելու, որ պատմությունը Դասխուրանցու խմբագրությանը ավելացվել է XV դարում Գանձասարի ինչ-որ հոգևորականի կողմից:

### Եզրակացություններ

1. «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի մի շարք հետազոտողներ պարզել են, որ աշխատությունը մեկ հեղինակի գրչի արգասիքը չէ: Ատենախոսության մեջ քննվել են երկի տարբեր հատվածների լեզվաճական առանձնահատկությունները, տարբերությունները, որոնք ևս հաստատում են, որ, իրոք, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը ներառում է մի շարք հեղինակների գրվածքներ, և իրավամբ այն կարելի է համարել ժողովածու Աղվանքի մասին:

2. «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի հնչյունական առանձնահատկություններից է կատկային կոշտ *լ(ղ)* հնչյունի վերածվելը ետնալեզվային *լ*-ի: Այս երևույթը առաջին անգամ հանդիպում է հենց այս երկում, այն առկա է աշխատության 10-րդ դարում գրված (այսինքն՝ Դասխուրանցու) հատվածում:

3. *Ո>ու* հնչյունափոխությունը ոչ թե 10-րդ դարում է ի հայտ եկել (ինչպես նշում են որոշ մասնագետներ), այլ 7-րդ: Փաստեր կան այդ ժամանակաշրջանի հեղինակների գրվածքներում:

4. «Աղուանից պատմութեան»-ը բնորոշ է բազմաթիվ նոր բառերի առկայությունը՝ մեր հաշվումներով 344 բառ, որից 231-ը ՆՅԲ-ում վկայված չէ: Նշվում են սխալ գրչագրությունները, մի շարք բառերի դեպքում տրվում են նոր մեկնաբանություններ:

5. Հոլովման համակարգի առանձնահատկություններից են.

ա) Ավելի ընդգրկում է դարձել սեռականի *-եան* վերջավորության գործածության ոլորտը. դրանով թեքվել են ոչ միայն *-ուստ*, *-ուրդ*, *-ունդ* վերջածանցներով բառերը, այլև մի շարք հատուկ անուններ:

բ) Նկատելի է *-ով* վերջավորության ընդհանրանալու միտումը, քանի որ տարբեր հոլովումների պատկանող մի շարք բառեր գործիականուն ստացել են *-ով*:

<sup>10</sup> «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 191-192:



զ) Շեղումներ կան ինչպես հասարակ, այնպես էլ հատուկ անունների հոլովման մեջ:

դ) Բազմաթիվ են հոլովական զուգածությունները: Դրանց մի մասը գոյություն ունի դեռևս դասական գրաբարում, իսկ մյուս մասը դասական ձևերին զուգահեռ այլ ձևերի ի հայտ գալու արդյունք է:

ե) Ո հոլովման պատկանող որոշ բառեր գործիականում *-ույթ*-ի փոխարեն ստացել են *-օթ* վերջավորություն:

զ) Բառերի *ի* վերջնահնչյունը դեռևս պահպանված է ուղիղ ձևերում, իսկ արդեն թեքման ժամանակ շատ դեպքերում ընկնում է:

է) Հաճախադեպ է *ի* նախդրի կրկնությունը բացառական և ներգոյական հոլովների կազմության ժամանակ:

ը) *Խա*-ով վերջացող տեղանունները հոլովվում են *ու* և *ի* հոլովիչներով:

6. Բայական (խոնարհման) համակարգում՝

ա) Սովորական է անցյալ դերբայի կիրառությունը դիմավոր բայի արժեքով:

բ) «Աղուանից պատմութեան» մեջ երկրորդ ապառնին անհամեմատ ավելի հաճախական է, քան առաջին ապառնին: Երկուսն առկա է վերջինիս գործածության 43 դեպք: Աշխատության ավելի ուշ գրված հատվածներում առաջին ապառնու գործածության քանակը նվազում է. երկի վեցերորդդարյան հատվածներում (ծավալը՝ 63 էջ) կա առաջին ապառնու 14 դեպք, յոթերորդ դարի հատվածներում (ծավալը՝ 140 էջ)՝ 15 դեպք, իսկ Դասխուրանցու գրած հատվածներում (ծավալը՝ 53 էջ) հանդիպում է մեկ օրինակ (սակավաթիվ մուշկներ կան նաև 5-րդ, 8-րդ դարերի և Դասխուրանցու կողմից արտագրված մասերում):

գ) Անկատար անցյալի կրավորական իմաստն արտահայտելու համար գործածվել է *-ուր* վերջավորությունը: Երկուսն առկա 23 օրինակներից հինգն է Կաղանկատվացունը, մնացած բոլորը գործածել է 10-րդ դարի հեղինակ Դասխուրանցին:

դ) Խախտված են ժամանակների բուն նշանակությունները. ներկան կիրառված է ապառնու իմաստով, նաև անցյալ կատարյալի փոխարեն, անցյալ անկատարը գործածվել է ներկայի և անցյալ կատարյալի փոխարեն և այլն:

7. Տրվել է երկի՝ ինչպես ընդհանուր քերականական իրողությունների, այնպես էլ յուրաքանչյուր հատվածի լեզվաոճական պատկերը:

Որոշ հատվածներ աչքի են ընկնում պատկերավորությամբ, ոճական հնարանքների բազմազանությամբ և հաճախանակությամբ: Միևնույն նախադասության մեջ գործածվել են հոմանիշներ կամ հականիշներ, նույն ածանցն ունեցող բառեր, կրկնություններ:

Լեզվաոճական քննությունը, ինչպես նաև որոշ գլուխների վերնագրերի և բովանդակությունների անհամապատասխանությունը թույլ են տալիս եզրակացնելու, որ Դասխուրանցին խմբագրել է իրենից առաջ գրված հատվածները, դրանք մասերի է բաժանել և վերնագրել:

Երկում առկա իրողություններն ու առանձնահատկությունները վեր հանելու համար այն համեմատել ենք 5-րդ դարի երկերի հետ (Աստվածաշունչ, Կորյուն, Ե. Կողբացի, Փ. Բուզանդ, Ագաթանգեղոս, Եղիշե, Մ. Խորենացի, Դ. Փարպեցի), և քանի որ առանձին հատվածներ գրվել են VII և X դարերում, ապա համեմատել ենք այդ ժամանակաշրջանների գրվածքների հետ (Սեբեոս, Հ. Դրասխանակերտցի, Թ. Արծրունի, Անանուն):

Այս համեմատությունների շնորհիվ հանգել ենք այն եզրակացության, որ թեև «Աղուանից պատմութիւն»-ը ունի շեղումներ դասական հայերենից, սակայն նրանում առկա չեն X դարին հատուկ այն իրողություններն ու շեղումները, որոնք գտնում ենք Հ. Դրասխանակերտցու, Թ. Արծրունու և այլոց գրվածքներում: Վերջիններիս համեմատությամբ «Աղուանից պատմութիւն»-ը ավելի հարազատ է դասական հայերենին, քանի որ երկի մեծ մասը գրվել է վաղ շրջանում (VII դար):

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հետևյալ հոդվածները.

1. Մովսես Կաղանկատվացու լեզվի բառապաշարը, «Չանդես հայագիտության», Երևան, 2002, N5, էջ 43-46:

2. Ածականը և թվականը Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում, «Կանթեղ», Երևան, 2004, 4(21), էջ 148-152:

3. Հոլովման մի շարք առանձնահատկություններ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում, «Կանթեղ», Երևան, 2011, 2(47), էջ 94-102:

4. Խոնարհման առանձնահատկությունները Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2012, 136.2, էջ 50-57:

МКРТЧЯН МАРИАМ ГЕНРИКОВНА  
ЯЗЫК ТРУДА “ИСТОРИЯ СТРАНЫ АЛУАНК”

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – Армянский язык.

Защита состоится 29-го марта 2013 года, в 15<sup>00</sup> часов, на заседании специализированного совета 019 Института языка им. Р.Ачаряна Национальной Академии Наук РА (0015, Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Труд “История страны Алуанк” –из числа видных исторических произведений средневековья, который сообщает важные сведения о восточных областях Армении: Арцахе и Утике.

Произведение стало целостным и было отредактировано в 10-ом веке Мовсэсом Дасхуранци, однако большая часть произведения я была написана в 7-ом веке, и автором этой части является Каланкатваци.

“История Алуанк” - это не целостное произведение; в нём вовлечено всё относящееся к Агванку: исторические сочинения, письма, официальные бумаги, народные беседы - сказы, предания.

В произведении имеются как грамматические реалии свойственные классическому армянскому, так и реалии, которые сформировались впоследствии, то есть отклонены от закономерных форм классического армянского.

В этом произведении впервые встречается переход язычкового (твердого) ղ(ł) к заднеязычному ղ(ɣ).

Встречаются слова, где гласное в начале слова выпало, например: название города “Илион” встречается в формах łion, Lion; или имя Aristakēs встречается в форме łstakēs. Это явление свойственно среднеармянскому, в то время как труд “История страны Агуанк” принадлежит в основном к постклассическому периоду древнеармянского (грабара).

В труде многочисленны слова, которые выступают только в этом произведении. В их числе слова: godestan, namesakan, turkan, p'aruaz, mog и другие. Имеются слова, которые не встречаются ни в одном словаре. В их числе слова: араек, gedur, gelik, grac, t'šnamadir, šnac'i, telarank' и другие.

Вышеупомянутому ряду слов следуют те слова, которые впервые употреблены в “Истории Алуанк”, например: aręšum, bazmagumar, zugakrōn, xaławet, mecašnorh и другие.

В диссертации исследованы также те слова, которые в произведении получили новое значение и смысл, например: zefun, čartaraxōs, erkrač'ap'ut'iwn, zuarčatesil, tanutęr и другие.

В произведении имеются слова, которые отклонились от закономерных форм склонения, например: iłj (желание, мечта, стремление), ktuc' (клюв), hac' (хлеб) и другие.

Имеются слова которые выступают параллельными формами, например: слово *ganj* - (сокровище, казна, духовное богатство) выступает с показателями склонения *h*, *pl* (*i*, *u*); слово *sov* - (голод) выступает с показателями склонения *pl*, *p* (*u*, *vo*); слово *ēš* - (осёл) выступает с показателями склонения *pl*, *p* (*u*, *vo*) и т.д.

Встречаются слова, принадлежащие к различным склонениям, которые в случае творительного падежа получают такое же окончание -*ov*, например: слова *k'inov*, *tiḡov*, из которых первое слово- это слово *k'inov* склонения *pl* (*u*), а другое слово *tiḡov* - это слово смешанного склонения *h-ш* (*i-a*).

В древнеармянском, в грабаре, в родительном падеже ряд слов, имеющих суффиксы *ust*, *urd*, *und* получили окончание *ean*, например: слова *xorhurd*, *snund*, *r'axust*, однако в произведении “История Алуанк” уподоблены с окончанием -*ean* даже некоторые имена собственные, например: *Pawlosean* (Погоса), *Kauean* (Каена).

В современном армянском, в местном падеже прибавляется окончание -*um*, однако ещё в “Истории Алуанк” имеются редкие образцы окончания на -*um*.

В случае собственных имён также имеются отклонения при склонении, например: имена собственные *Yovsep'*, *Mariam*, *Sat'enik* просклонены иначе.

В древнеармянском языке посредством суффикса -*goyn* составлена сравнительная степень прилагательного, однако в языке Мовсэса Каланкатваци посредством суффикса -*goyn* составлена превосходная степень прилагательного.

Параллельными формами выступают некоторые числительные, например: числительное *erkeriwt* – (двести) употребляется в двух формах, а именно: в форме *erkeriwt* и в форме *erku hariwt*.

В третьей части произведения количественное числительное употреблено вместо порядкового числительного.

Некоторую особенность или специфику имеет употребление местоимений, например: постпозитивные местоимения употреблены в первой форме.

В произведении “История Албании” встречаются глаголы, которые отклоняются от форм спряжения классического армянского языка – грабара до 460г. н.э.

Это глаголы *yavelum* (добавить), *šaxrem* (парить), *hastatem* (утвердить), *ragēwet* (награждать), *heḡam* (ленился) и так далее.

Как известно, в классическом армянском языке неопределённое причастие не имеет окончания -*il*, однако, в данном произведении присутствуют восемь случаев неопределённого причастия с подобным окончанием.

В качестве личного глагола данному сочинению свойственно как использование неопределённого причастия, так и использование причастия прошедшего времени.

Известно, что у страдательного залога классического армянского языка раздельные окончания отсутствовали. Однако окончание *iwt* использовано 23 раза и является страдательным залогом несовершенного прошедшего времени в III лице единственного числа.

В отличии от второго будущего времени, первое будущее время использовано очень мало.

Применение времен в сочинении представляет смешанную картину.

Настоящее употреблено в значении будущего времени, а будущее время в значении настоящего.

Прошедшее несовершенное время употреблено вместо настоящего и прошедшего совершенного времён.

Встречаются много составных глаголов, которые не употреблялись предшествующими авторами.

Определённые отклонения имеются также в употреблении предлогов, а именно: предлогом ի (i) образовывается исходно-отложительный падеж, однако в этом произведении он часто повторяется, то есть в построении исходно-отложительного падежа принимали участие два предлога ի (i).

Обычно значение слов “о, об, относительно” выражено предлогом զ (z) и исходно-отложительным падежом, однако в произведении Каланкатвази это значение выражено предлогом զ (z) и винительным падежом, что не свойственно классическому армянскому.

В "Истории Алуанк" подлежащее представлено в именительном, родительном и дательном падежах.

В произведении встречаются также синтаксические отклонения.

В "Истории Алуанк" имеется форма “спрягательного глагола в соединении с творительным неопределённой формы того же глагола”, которая придает действию усиительное значение.

Весь труд состоит из следующих произведений, созданных в разные века:

V век – послание епископа Гюта;

VI век – “Повесть о Вачагане”, письма Матэ священника и Абрама Мамиконяна;

VII век – история католикоса Виро, исторический труд Мовсэса Каланкатвази, “История 684 года”, сочинение Овсэпа Анапатакана;

VIII век – письмо Согомона Макэнаци;

X век – произведение Мовсэса Дасхуранци.

В диссертации даны также лингвостилистические особенности вышеупомянутых фрагментов.

MKRTCHYAN MARIAM  
THE LANGUAGE OF THE WORK “THE HISTORY OF ALBANIA”

Dissertation for the degree of Candidate of Philological Sciences for specialty 10.02.01 – Armenian language.

The defense will take place on March 29, 2013, at 15<sup>00</sup>, at the session of the Specialized Council 019 of the Language Institute after H.Acharyan of NAS of RA (15 Grigor Lusavorich str., Yerevan 0015, Armenia).

SUMMARY

“The History of Albania” is one of the famous historical compositions of Middle Ages which gives us important information concerning the Eastern provinces of Armenia i.e. Artsakh and Utik. Though the work was completed and edited in the 10<sup>th</sup> century by Movses Daskhurantsy, the greater part of it was written in the 7<sup>th</sup> century by Movses Kakhankatvatsy.

“The History of Albania” is not a complete story: it includes everything related to Albania such as historical compositions, letters, official writings, national colloquies, legends.

In this work there are grammatical specifics typical to classical Armenian language at the same time specifics which were formed afterwards and deviate from classical Armenian regular forms.

Here for the first time we meet the change of uvula (hard consonant) ɲ(ɖ) into back alveolarch ɲ(ɣ).

In this work we meet words where the vowel in the first syllable has dropped, for example the name of the town Ilion we meet as lion, Lion, or the name Aristakēs we meet in the form of řstakēs. This phenomenon is typical to Armenian Language of Middle Ages, while the "The History of Albania" basically belongs to the Old Armenian post-classical period.

There are lots of words which appear only in this work. Among them are godestan, namesakan, turkan, p'aruaz, mor and so on.

There are words which didn't appear in any dictionaries like apaek, gedur, gelik, grac, t'snamadir, řnac'i, telarank' etc.

The above mentioned word-line is followed by the words which were used in “The History of Albany” for the first time, for example apreřum, bazmagumar, zugakrōn, xařařawēt, mecařnorh and so on.

In this dissertation we have numerated the words which have got new meanings such as zeřun, řartaraxōs, erkrač'ap'ut'iwn, zuarčatesil, tanutēr and so on.

There are some words in the work which have deviated from their regular declination, for example-ij (ɲɲΔ) (longing), ktuc' (beak), hac' (bread) and so on.

We come across words which have appeared in parallel forms, for example the word ganj (treasure) with its ɲ, ɲɪ (i and u) declensional endings (flexion) the word sov (famine) with its ɲɪ, ɲ (u and vo) declensional endings, the word ēř (donkey) with its ɲɪ, ɲ (u and vo) declensional endings and so on.

Here we meet the words which belong to different cases and they get the same ending in the instrumental case-the ending -ov, for example k'inov, migov, the first word belongs to the nɪ (u) declension and the second one to the ɧ-u (i-a) mixed declension.

In Old Armenian language some words with the suffix ust, urd, und got ean ending in the possessive or genitive case, for example xorhurd (advice), snund (food), p'axust (escape) and so on. But in "The History of Albania" even some personal names have got the ending -ean, such as Pawłosean(Pogosity), Kayenean(Kayeny).

In Modern Armenian language the locative case has got the ending -um while we have found a few words by the ending -um in "The History of Albania".

There are deviations in the declination of the proper names either, for example the names Yovsep', Mariam, Sat'enik had declined differently.

In Old Armenian Language the comparative degree of adjectives was made with the help of affix -goyn, but in Kaghankatvetsy's language the affix -goyn was used to form the superlative degree of the adjectives.

Some numerals appear in parallel forms, for example the numerous erkeriwr is used in two forms erkeriwr and erku hariwr (two hundred).

Sometimes in the 3<sup>rd</sup> part of the work the absolute numeral was used instead of the ordinal numeral.

The use of the pronouns has also some peculiarities, for example the pronouns of the backformation were used in the first form.

In the work of "The History of Albania" we have met verbs which have forms deviated from the classical Armenian conjugation forms. These are yavelum (increase), čaxrem(flit), hastatem(confirm), pargēwem (award), hełgam(be lazy) and so on.

As we know the infinitive in classicai Armenian had not the ending -il, but there are 8 cases with by the ending -il in this work.

The use of the infinitive and the past participle in the role of the finite form of the verb is characteristic for this work.

A well known fact that there were no special endings for the passive voice in the classical Armenian but the ending "-iwr" which is the third form singular for the past indefinite in the passive voice is used 23 times in this work.

Unlike the second future the first future is rarely used in this work.

The use of tenses represents mixed picture in the work. The present tense expressed the meaning of future tense and vice versa, the future tense has the meaning of present. The past indefinite tense form was used instead of present and past perfect tenses.

Here we meet lots of juxtaposition verbs which have not been used by the previous authors.

There are some deflections in the use of the prepositions. The ablative case is formed with the help of preposition ɧ (i), but in this work we see that the preposition i was often doubled that is to say for the formation of the ablative case double i was used. Occasionally the ablative case was expressed with no preposition.

Usually the meaning of the words "masin, veraberyal" (about) was expressed with the help of preposition q (z) and in the accusative case which is not typical to classical Armenian. In "The History of Albania" the subject was used in the nominative, genitive and in the dative cases.

In this work we find the deviation of the word order also. There are lots of synonyms, antonyms, similes and other means of expressions in this work.

In “The History of Albania” the pattern of conjugated verb plus the same verb in the instrumental form of the indefinite verb is used to make the action more impressive.

The work consists of parts which were created during different periods:

5<sup>th</sup> century-The letter of the Bishop Gyut.

6<sup>th</sup> century-The novel of Vachagan, the letters written by Abraham Mamiconyan and by vicar(priest) Mathe.

7<sup>th</sup> century-The work written by Catholicos Viro, the historical work written by Kaghankatvatsy, the history of year 684, the work written by Hovsep Anapatakan.

8<sup>th</sup> century-The letter written by Soghomon Makenatsy.

10<sup>th</sup> century-The writings of Movses Daskhurantsy.

In the dissertation the peculiarities of the linguistic style of the above mentioned sections are also represented.